

Իրանահայ համայնք

Կայացավ «Թունյան» դպրոցի եւ «Սասուն» մանկապարտեզի շինարարական աշխատանքների հարցով մրցույթը

Նախաձեռնությամբ Թեհրանի հայոց Թեմական խորհրդի՝ ազգային առաջնորդարանի դահլիճում կայացավ ,թունյանե դպրոցի եւ ,սասունե մանկապարտեզի շենքերի կառուցման մրցույթը անցկացմանը ներկա էին՝ Թ. Յ. Թեմական խորհրդի ատենապետ դոկտ. Աիդա Յովհաննիսյանը, փոխատենապետ Սեւան Դանիելյանը, խորհրդի անդամ Արա Շահվերդյանը, 6 կապալառուներ, որոնք շինարարական նախագծի իրագործման համար ներկայացրել էին իրենց արժեքները եւ կազմակերպիչ հանձնախումբը:

Ս. Վարդանանց տոնին նվիրված ձեռնարկ՝ Շահինշահրում



10 Մարտ, 2010 Իրանահայեր Լրատու ցանց Յինգաբքի, փետրվարի 18-ի երեկոյան, հովանավորությամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Ս. Բաբգեն եպս. Չարյանի, կազմակերպությամբ Շահինշահրի հայ համայնքի վարչության եւ ծնողական խորհրդի, համագործակցությամբ Շահինշահրի ,սրբոց Վարդանանցե դպրոցի ուսուցչական կազմի՝ Շահինշահրի ,սրբոց Վարդանանցե դպրոցի դահլիճում տեղի ունեցավ ձեռնարկ՝ նվիրված Սրբոց Վարդանանց տոնին: Ժրագիրն բաղկացած էր երեք բաժնից, բանախոսություն, գեղարվեստական բաժին եւ ներկայացում:

Վարդանանքը Թավրիզում

10 Մարտ, 2010: Իրանահայեր Լրատու ցանց : Փետր. 10-ին եւ 11-ին, հերթականորեն ՅՕՄ-ի «Ծերունի Գասպարյան» մանկապարտեզ-նախակրթարանի եւ հայոց դպրոցի հարկի ներքո նշվեց Վարդանանց հիշատակը հավերժացնող տոնը: Ներկա էին՝ առաջնորդ Սրբազան Յայրը, թեմի Պատգ. Ժողովի եւ Թեմական խորհրդի ներկայացուցիչները, ՅՕՄ-ի Թավրիզի մասնաճյուղի վարչության ու միության անդամուհիները եւ մանկապարտեզ-նախակրթարանի աշակերտների ծնողները:

Գերազանցիկ ուսանողների եւ աշակերտների գնահատանքի երեկո

09 Մարտ, 2010 :Թեհրանի հայոց Թեմական խորհրդի նախաձեռնությամբ եւ Կրթական խորհրդի կազմակերպությամբ, երեկ՝ երկուշաբթի, մարտի 8-ի երեկոյան, Թեհրանի հայոց ազգ. առաջնորդարանի դահլիճում, նյութական պարգևատրմամբ՝ գնահատանքի արժանացան անցյալ ուսումնական տարեշրջանում պետական համալսարանների մուտքի քննություններում բարձր մակարդակ նվաճած 15 նորամուտ ուսանող-ուհիները, միջնակարգի երրորդ դասարանի ավարտական քննություններում հաջողությունների արժանացած 12 ու հայերեն առարկաների ամենաբարձր միջինն ստացած 12 աշակերտ-ուհիները, նաեւ Քրիստոնեական դաստիարակության եւ Կիրակնօրյա դպրոցների մարմնի կազմակերպած քննություններում առաջնություն շահած 4 աշակերտուհիները: Մանրամասնությունները՝ մեր հաջորդ համարներից մեկում:

Իրան

ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԲԱՅԱՌԵՑ ԸԱՅ-ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱԿՍՈՒՄԸ

ԻԻՅ դեսպան Սեյիդ Ալի Սադայանի խոսքերով՝ Իրանը մշտապես կողմ է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խնդիրը կարգավորվի ըմբռնման եւ երկխոսության միջոցով: «Իրանը հակամարտության հենց սկզբից իր ջանքերը գործադրել է, որպեսզի լինի հրադադար: Առաջին երկու հրադադարների ժամանակ Իրանը ներդրել է մեծագույն ջանքերը: Այդ առումով բարձր ենք գնահատում միջազգային կազմակերպությունների, հատկապես ԵԱՀԿ-ի գործունեությունը», ասաց նա:



Անդրադառնալով հնարավոր պատերազմի մասին խոսակցություններին՝ դեսպանը հույս հայտնեց, որ հարցը կլուծվի երկկողմանի համագործակցությամբ: «Ինչ վերաբերում է պատերազմին, ապա դժվար այն սկսվի: Սա իմ անձնական կարծիքն է, ես բացառում եմ պատերազմի վերսկսման հավանականությունը»: Խոսելով ազատագրված տարածքներում խաղաղարար ուժերի տեղակայման մասին, դեսպանը՝ հաշվի առնելով, որ ԻԻՅ-ն միակ պետությունն է, որ Ղարաբաղի հետ ունի ընդհանուր սահման, ասաց, որ Իրանը ունեցել է եւ ունի իր տեսակետը: Անդրադառնալով հայ-իրանական հարաբերություններին՝ դեսպանը մշակութային ու քաղաքական բնագավառներում դրանք բնութագրեց պատմական: Տնտեսական ոլորտում էլ կան բազմաթիվ ծրագրեր, որոնք պետք է մոտ ապագայում կյանքի կոչվեն: Այժմ քննարկվում են մի շարք ռազմավարական բնույթի նախագծեր, որոնցից են ճանապարհների հարցը, երկաթգծի կառուցումը: Դեսպանը նկատում է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը որոշակի ազդեցություն թողեց. երկու երկրների

ամետրաշրջանառության ծավալներում նկատվեցին նվազումներ: «Այժմ աշխատում ենք ծավալները բարձրացնել»:

Հայաստանի տարբեր բուհերում, ըստ դեսպանի ներկայացրած տվյալների, սովորում է 1800 իրանցի ուսանող: Սակայն անցյալ տարի պարզ դարձավ, որ Իրանում հայկական բուհերի դիպլոմները չեն ճանաչում: Սաղայանը չթաքցրեց, որ նման խնդիրներ գոյություն ունի իր երկրում, սակայն հավելեց, որ խնդիրը տեխնիկական բնույթ է կրում: Խնդիրը հարթելու համար շուտով կկայանա ՀՀ Եւ ԻԻՀ ԿԳ նախարարների հանդիպումը Իրանում»:

Հայ-թուրքական հարաբերություններ

Պատասխանելով «Ազգ» օրաթերթի հարցին՝ Սաղայանը փաստեց, որ Իրանը կողմ է հայ-թուրքական հարաբերությունների զարգացմանը եւ դրական է գնահատում սահմանի բացմանն ուղղված երկու երկրների ջանքերը:

«Իրանը սատարում է յուրաքանչյուր նախաձեռնություն, որ նպաստում է տարածաշրջանում խաղաղությանը: Հայաստանը մեր հարեւան երկիրն է, եւ նա պետք է իր հարաբերությունները կարգավորի իր հարեւանների հետ՝ ոչ միայն Թուրքիայի, այլեւ Ադրբեջանի հետ, եւ մենք ամեն ջանք կգործադրենք այդ հարաբերությունները բարելավելու համար: Մենք կողմ ենք հայ-թուրքական սահմանի բացմանը»:

Ռոբերտ Քոչարյանի այցը

«Իրանը Հայաստանի թե՛ նախորդ, թե՛ ներկայիս նախագահի հետ ունի բավական ջերմ հարաբերություններ, եւ հաշվի առնելով, որ պարոն Ռոբերտ Քոչարյանը մեծ դերակատարում է ունեցել Հայաստանի եւ Իրանի միջեւ հարաբերությունների զարգացման եւ խորացման գործում, Իրանի արտգործնախարար Մանուշեիր Մոթաքին նրան հրավիրեց Իրան», այսպես մեկնաբանեց Սաղայանը վերջերս ՀՀ երկրորդ նախագահի այցն Իրան: Այցը երկօրյա էր, Քոչարյանը հանդիպել է նաեւ ԻԻՀ նախագահի հետ եւ քննարկել երկկողմ հետաքրքրություն ունեցող հարցեր:

Հայաստան

ԱՄՆ Կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում

Հանձնաժողովը հայկական 252 բանաձեւի քվեարկմանն անցավ, ընդ որում դեմ արտահայտված կոնգրեսականներից եւ ոչ մեկը չժխտեց ցեղասպանության փաստը, պարզապես՝ «Ժամանակը չէ, եւ Թուրքիան մեր բարեկամն է»: Մեջլիսի հանձնաժողովի նախագահ Մերջանի եւ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Թանի «վազվզոցը» նիստերի



դահլիճով, փաստորեն ապարդյուն անցան ԱՄՆ որդեգրած քաղաքական դիրքորոշման դիմաց: 23 կոնգրեսմեն այդ ասացին ցեղասպանությանը, 22՝ ոչ:

Շվեդիայի խորհրդարանն ընդունել է Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծը

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Շվեդիա խորհրդարանն այսօր 131 կողմ, 130 դեմ ձայներով ընդունել է Հայոց ցեղասպանության



ճանաչման մասին օրինագիծը: Փաստադրեք, որի քննարկումը սկսել էր այսօր կեսօրին,

պատրաստել էին 15 կուսակցությունների պատգամավորներ: Օրինագիծը, բացի հայերի ցեղասպանությունից, դատապարտում է նաեւ Օսմանյան կայսրության այլ ժողովուրդների դեմ իրականացված ցեղասպանությունները: Նշենք, որ օրինագծի ընդունումը կանխելու նպատակով պաշտոնական Անկարան ակտիվ քարոզչություն էր իրականացնում՝ գործի դնելով նաեւ տեղի ողջ համայնքը:

Կատալոնիայի պատգամավորները Իսպանիայի խորհրդարանին առաջարկել են ճանաչել Հայոց ցեղասպանությունը

ՄԱԴՐԻԴ, 9 ՄԱՐՏԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսպանիայի՝ 350 պատգամավորական աթոռներ ունեցող խորհրդարանում



Կատալոնիան ներկայացնող «Կատալոնիայի հանրապետական ձախեր» (ERC), «Միացյալ ձախեր» (IU) եւ «Կատալոնիայի կանաչների նախաձեռնություն» (ICV) կուսակցությունների դաշինքը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին առաջարկություն է մտցրել խորհրդարան:

ՅԵՐԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՐԵԱՐԵՇՈՒՄՆԵՐ

Բրիտանական խորհրդարանի ստորին՝ Յամայնքների պալատի ներկայացուցիչների զգալի մասը կողմ էր արտահայտվել Յայոց ցեղասպանության ընդունման ու դատապարտման կապակցությամբ, ավելին՝ Յամայնքների պալատում ընդունվել էր հայտարարություն այս առումով: Եվ ահա ապրիլի 30-ին նույն Յամայնքների պալատում տեղի կունենա Անգլիայում իշխող «Աշխատավորական կուսակցության» ներկայացուցիչ Էնդրյու Դիսմորի հեղինակած «Յեղասպանության հիշատակի օր» օրինագծի երկրորդ քննարկումը, որին կմասնակցեն ներկայացուցիչներ ոչ միայն կառավարությունից ու ընդդիմությունից, այլև պալատի մյուս անդամները:

Որպեսզի նշված օրինագիծը օրենքի ուժ ստանա, անհրաժեշտ է, որ հաստատվի նաև Լորդերի պալատում, այնուհետև արժանանա թագուհու հավանությանը:

ՅԵՐԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄՍԱՆ ԲԱՆԱՁԵՎ ԽՄԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ

Փետրվարի 26-ին Իսպանիային մաս կազմող Կատալոնիայի ինքնավարության խորհրդարանը միաձայն ընդունել է դատապարտել է Յայոց ցեղասպանությունը: Եվ ահա նույն կատալոնական խորհրդարանի երեք պատգամավորների, ինչպես նաև Կանաչների կուսակցության մի քանի պատգամավորների նախաձեռնությամբ հայկական բանաձեռն է մտել Իսպանիայի խորհրդարան: Բանաձեռնում նաև նշված է, որ Իսպանիան, որպես Եվրոմիությունում նախագահող երկիր, պետք է քաջալերի հայ-թուրքական գործընթացները եւ ամեն կերպ օժանդակի Անկարա-Երեւան երխտությանը:

ՐԻՍԱ ԷԼ ԿԱՆԱԴԱՆ. ՐԱՋՈՐԴՆ ՈՎ Է

Աշխարհի տարբեր երկրների հեռուստա-ընկերությունները, պետական մարմինները հրատարակում են քարտեզներ, որտեղ Ղարաբաղը Յայաստանի մասն է կազմում: Արդարության նման վերականգնումներ եղել են Ուկրաինայում, Ռուսաստանում, Ավստրիայում, «Եվրոնյուզ» հեռուստաընկերության եթերում եւ այլուր: Եվ մինչ Ադրբեջանն իր բողոքի նոտաների հասցեներն է թարմացնում, աշխարհի տարբեր երկրներում շատանում են «շփոթվողները»: Յիմա էլ կանադական VoipJet հեռուստահաղորդակցության կայքում է Ղարաբաղը ներկայացվել որպես Յայաստանի մաս: Փաստորեն միջազգային հանրությունն այլևս «չի կարողանում» անտեսել իրողությունը, քանի որ անհնար է «նման սխալների» կրկնությունը՝ այն էլ աշխարհի տարբեր ծայրերում: Իսկ ադրբեջանական լրատվական կայքերը, իհարկե, խնդրել են իրենց ընթերցողներին ստորագրել կանադական ընկերությանն ուղարկվելիք նամակը», որտեղ կան «ինչ-որ» միջազգային փաստաթղթեր, ըստ որոնց Ղարաբաղը պատկանում է Ադրբեջանին: Յնարավոր է, որ կանադական ընկերությունն «ուղղի» իր

սխալը, սակայն, նկատվող միտումը ցույց է տալիս, որ մոտ ապագայում «կսխալվեն» մեկ ուրիշ երկրում ու այդպես շարունակ, մինչև այս «սխալն» այլևս սխալ չհամարվի որեւէ մեկի կողմից:

ԽՈՋԱԼՈՒԽ՝ ՐՈՐԻՆԱԾ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ Ադրբեջանցիները ներկայացնում են կեղծ լուսանկարներ

«Ադրբեջանական կողմի լուսանկարները՝ Խոջալուի ողբերգության վերաբերյալ, կեղծիք են: Դրանք այն կադրերը չեն, որ լուսանկարել է



ադրբեջանցի ֆոտոլրագրող Չինգիզ Մուստաֆաեւը»: Սա չէիս լրագրող Դանա Մազալովայի կարծիքն է: Նա լուսաբանել է ռազմական գործողությունները Ղարաբաղում, Չեչնիայում եւ Բոսնիայում: Չինգիզ Մուստաֆաեւը միակ լուսանկարիչն էր, ում հաջողվել է նկարահանել Խոջալուի ողբերգության հետևանքները: Մազալովան պատմում է, որ ճանաչել է Մուստաֆաեւին, ծանոթացել են Ստեփանակերտում, հետո միասին նշել են ադրբեջանցի ֆոտոլրագրողի որդու ծնունդը: Մուստաֆաեւը չէիս լրագրողուհուն է ներկայացրել Խոջալուի դեպքերի վերաբերյալ «հուն» կադրերը, որոնք նկարահանել էր ադրբեջանական ուղղաթիռից:

«Չինգիզը պատմում էր, որ դեպքի վայրում եղել է երկու անգամ՝ փետրվարի 28-ին եւ մարտի 2-ին, եւ աչքի տեսածը լուսանկարել: Նա պատմում էր, որ սկզբում կրակել էին խաղաղ բնակչության ոտքերին, որպեսզի նրանք չկարողանային փախչել, իսկ հետո նրանց մորթել էին, ամենայն հավանականությամբ՝ կացնով: Նկարահանման ժամանակ դիակների կողքով քայլում էր համազգեստով մի տղամարդ, որը չէր էլ փորձում թաքնվել ադրբեջանական ուղղաթիռից»: Լրագրողի խոսքերով, երկու օր անց Մուստաֆաեւը վերադարձել է դեպքի վայր ու տեսել, որ դիակների գլխամաշկը հանված էր:

Մազալովան վստահեցրեց, որ այդ կադրերը տեսել է Մուստաֆաեւի բնակարանում: Նա հիշում է, որ ֆոտոլրագրողը շատ էր անհանգստանում, վախենում իր կյանքի համար, տնից գրեթե դուրս չէր գալիս:

«Նա պատմում էր, որ վախենում է Բաքվում քայլել առանց զրահազգեստի», հիշում է չէիս լրագրողուհին: Այդ իրադարձություններից վեց ամիս անց անհասկանալի պայմաններում ադրբեջանցի լուսանկարիչը սպանվեց:

«Միայն կարող եմ ասել, որ ադրբեջանական կողմի ներկայացրած կադրերը՝ Խոջալուի ողբերգության վերաբերյալ, կեղծիք են»:

Մազալովան նշում է, որ Մուստաֆաեւի լուսանկարներում չկային մերկ դիակներ, չկային նաև կենդանի մարդիկ՝ բացառությամբ համազգեստով

մարդու: Ավելին, Չինգիզն անձամբ չի լուսանկարվել այդ ողբերգության ֆոնին: Մինչդեռ ադրբեջանական կողմի ներկայացրած լուսանկարներում հանդիպում ենք մերկ դիակների, կենդանի մարդկանց:

«Այդ լուսանկարներում այն չէ, ինչ նկարել է Չինգիզը, դա խոջալուն չէ»:

Մազալովան պատմում է, որ մարդկանց դիակները հայտնաբերել են Ադրբեջանի Ադդան քաղաքից 200 մետր հեռավորության վրա:

Չեխ լրագրողը պատմեց, որ խոջալուն գրոհող ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումները խաղաղ բնակիչներին միջանցք էին թողել մարտական գործողությունների գոտին անվտանգ լքելու համար: Մազալովայի հավաստմամբ՝ միջանցքով մեսիտեցի թուրքերի հետ անցել է նաև ռուս լուսանկարիչ Վիկա Իվյովան, որը հետագայում այդ իրադարձությունները փաստող կադրեր է հրատարակել:

Չեխ լրագրողը նշեց, որ դարաբաղյան հակամարտությունը եվրոպայում որեւէ մեկին չի հետաքրքրում: «Չեմ կարծում, որ այսօր որեւէ մեկը հետաքրքրվում է այդ թեմայով: Ավելին, եվրոպացիները ցանկանում են հեռու մնալ այդ հիմնախնդրից: Դրանով զբաղվում է ԵԱՀԿ Մինսկի խումբը»:

Անդրադառնալով վերջերս չեխական Լիդիցե գյուղում տեղի ունեցած իրադարձություններին, երբ տեղի ադրբեջանական համայնքը փորձել է հակահայկական խնդիրներ լուծելու նպատակով օգտագործել երկրորդ աշխարհամարտի տարիներին նացիզմի զոհերի հիշատակին Լիդիցե գյուղում կառուցված հուշահամալիրը (այդ մասին «Ազգը» տեղեկացրել էր), լրագրողն ասաց. «Չեմ ուզում, որ որեւէ մեկը Լիդիցեում նացիզմի զոհերի դիակների վրա քարոզչություն ծավալի»:

Սփյուռք

ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՎԱԾ ՐԱՅԵՐԻ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԹԻՎԸ ՉՈՒՐՋ ՄԵՎ ՄԻԼԻՈՆ Է

Հա՞յ են արդյոք ցեղասպանության տարիներին բռնի իսլամացված հայերի սերունդները: Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը նկատում է, որ էթնիկ եւ կրոնական պատկանելությունն այս պարագայում պետք է տարբերակել: Դեռ ավելին, նա վստահ է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է հեռահար նպատակ ունենա բռնի իսլամացած հայերին վերադարձնելու սեփական ինքնությանը: Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը «Հենարան» ակումբում երեկ ներկայացնելով «Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին» գիրքը, նշեց, որ թուրք հասարակության 30-40 տոկոսն

այսօր ինքնության ճգնաժամ է ապրում, շատերը վերադառնում են իրենց ակունքներին: Թուրքագետի տվյալներով, ցեղասպանության եւ կոտորածների տարիներին բռնի իսլամացվել են շուրջ 200.000 հայ, նրանցից գրեթե 100.000-ը հետագա տարիներին վերադարձել են քրիստոնեությանը: Մյուս 100.000-ը քրիստոնեությունը վերընդունելու հնարավորությունը չի ունեցել: «Այսօր Թուրքիայում ապրում են նրանց սերունդները: Մոտավոր հաշվարկներով, նրանց թիվը կազմում է շուրջ մեկ միլիոն», ասաց Ռուբեն Մելքոնյանը:

Վերջերս Թուրքիայում հրատարակվել է Թալեաթ փաշայի օրագիրը, որի էջերում Թալեաթ փաշան խոսում է բռնի իսլամացված հայերի մասին՝ խստիվ հրահանգելով հետեւել նրանց եւ արմատներին վերադառնալու ամենափոքր ցանկության դեպքում իսկ արձագանքել: «Աքսորի մեկ այլ ալիք էլ եղավ, եւ այն հայերը, ովքեր ցանկանում էին քրիստոնյա մնալ, զոհվեցին», ասաց Ռուբեն Մելքոնյանը: Իսլամացված հայերի մեծ մասը կանայք եւ երեխաներ էին: Թուրքագետը նկատում է, որ բռնի իսլամացման գործընթացը միայն ցեղասպանության տարիներին չի սկսվել: «Այս տարածաշրջան թուրքական ցեղերի ներթափանցելուց հետո սկսվեց տեղի բնակչության իսլամացումը: Նպատակը մեկն էր՝ թուրքական ցեղերը փոքրամասնությունից պետք է վերածվեին մեծամասնության: Բռնի իսլամացումն ամենակարճ ճանապարհն էր», ասաց Ռուբեն Մելքոնյանը:

Իսլամացման փաստը, թուրքագետի հավաստմամբ, այսօր շահարկվում է նաև Թուրքիայում: Թուրքերի տեսությունը հետեւյալն է. ցեղասպանություն չի եղել, հայերը կամովին փոխել են կրոնը: Բռնի իսլամացումը շարունակվեց նաև Թուրքիայի հանրապետությունում: «Բռնի իսլամացման դեպքեր են եղել 1950-ական, 1980-ական թվականներին: Ներկայումս էլ դեպքեր են եղել, երբ հասարակության ճնշման ներքո հայերն ընդունում են իսլամը», ասաց Ռուբեն Մելքոնյանը: Իսլամացման առավել վտանգավոր ձեւերից մեկը հայերի եւ Թուրքիայի քաղաքացիների միջեւ ամուսնությունների գրանցումն է: Այս դեպքում, որպես կանոն, հայուհիներն ընդունում են իսլամը:

Թուրքագետը իսլամացած հայերին բաժանում է երկու խմբի. նրանք, ովքեր բռնի իսլամացվել են, բայց գաղտնի պահպանել են քրիստոնեությունը եւ ազգային ավանդույթները, նրանք, ովքեր տարիների ընթացքում կորցրել են իրենց ակունքները:

«Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին» գրքում թուրքագետը գիտակնորեն ներակայացնում է իսլամացման գործընթացը՝ փաստեր ներկայացնելով հայկական եւ թուրքական արխիվներից: Գրքում թուրքագետը օգտագործել է նաև Արեւմտյան Հայաստանում կատարած իր դաշտային աշխատանքների արդյունքները:

ՄՐԵՎԻԿ ԲԱՂՆԱՅԱՆ

**ՀԱՅԵՐԻ ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄԸ ՎԿԱՅՈՒՄ Է
ՀԵՆՑ ԹԱԼԵԱԹԸ**

Թուրքագետ, ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի փոխդեկան Ռուբեն Մելքոնյանը, ներկայացնելով Թուրքիայում հայերի բռնի իսլամացման խնդիրը, ասել է, թե վերջին շրջանում թուրքական գիտական շրջանակները եւս անդրադառնում են դրան՝ փորձելով վստահեցնել, որ ցեղասպանություն չի եղել ու հայերը “կամովին փոխել են իրենց կրոնը եւ շարունակել են ապրել արդեն որպէս թուրքեր”:

Սակայն, ըստ թուրքագետի, հենց իրենց ներկայացրած փաստերն ապացուցում են ճիշտ հակառակը, կրոնափոխությունը, առաջին հերթին, դիտվում է որպէս ազգային ինքնագիտակցությունը ջնջելու տարածված մեթոդ, “իսլամացման դեպքեր տեղի են ունեցել նաեւ հանրապետական Թուրքիայում, եւ հայության այն բեկորները, որոնք ինչ-որ կերպ շարունակել են գոյատևել Թուրքիայի տարածքում, Թուրքիայի հանրապետության պատմության տարբեր տարիներին պետական քաղաքականության հետեւանքով ենթարկվել են բռնի իսլամացման”:

Ռ. Մելքոնյանը հայտնել է, որ վերջերս Թուրքիայում հրատարակվել է Թալեաթ փաշայի օրագիրը, “որտեղ հանդիպում ենք հայերի բռնի իսլամացման փաստերի”։ Ըստ նրա, նույնիսկ փաշայի ձեռագրով գրված է, թե քանի հայ երեխաներ են մնացել որբ եւ որ տարածքներում են նրանք բաժանված: Օրագրում կա Թալեաթի կարգադրությունը՝ հայ երեխաներին՝ բաժանել մուսուլմանական ընտանիքներին՝ այն պայմանով, որ նրանց տրվի իսլամական կրթություն եւ հատուկ շեշտվում է՝ հատկապէս այն տարածքներում, որտեղ չկան քրիստոնյաներ ու հայեր:

Ըստ տարբեր նյութերի, որոնք պահպանվել են ԱՄՆ-ի ազգային արխիվում, Ազգերի լիգայում, ցեղասպանության ժամանակ բռնի իսլամացման են ենթարկվել շուրջ 100.000 հայեր, որոնց մեծ մասը եղել են կանայք ու երեխաներ: “Երբ համադրում ենք բոլոր փաստերը, կարող ենք նշել, որ ցեղասպանության ամբողջ ընթացքում, երեւի թե, իսլամացվել է 200.000 հայ, որոնցից 98 հազարը, ըստ տարբեր աղբյուրների, 1918-22թթ. վերադարձել են իրենց ինքնությանը, մոտավորապէս 100.000-ը մնացել են իսլամական ընտանիքներում”, - նշել է Ռ. Մելքոնյանը եւ հավելել, որ հաշվի առնելով բնակչության աճը, կարող ենք ասել, որ այդ շերտը այժմ կարող է հասնել մոտավորապէս 1 մլն-ի:

Նարե Մշեցյան

“Լուսանցք” թիվ 141, մարտի 19-25, 2010թ.

**ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է**

Եվրոպայի Հայերի Համագումարը դատապարտում է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Երդոհանի Լոնդոնում

արած հայտարարությունը, ըստ որի անհրաժեշտության դեպքում Թուրքիայից դուրս կհանի ՀՀ 100.000 քաղաքացիների, որոնք անօրինական ապրում եւ աշխատում են այնտեղ: Այս փաստը նույնպէս գալիս է ապացուցելու, որ նաեւ ժամանակակից Թուրքիայում տիրում է այլատյացություն, մասնավորապէս անհանդուրժող վերաբերմունք հայ ժողովրդի նկատմամբ: Ջարմանալի է, որ նման հայտարարությամբ հանդես է գալիս մի պետության ղեկավար, որի քաղաքացիներից մի մեծ զանգված, որպէս ապաստանյալներ եւ գաղթականներ ապրում են եվրոպական երկրներում: Առավել զարմանալի է նաեւ այն առումով, որ նման դիրքորոշում եւ մոտեցում ունեցող մի երկիր ձգտում է դառնալ եվրոպական ընտանիքի անդամ:

Կոչ ենք անում Եվրոպայի համապատասխան մարմիններին դատապարտել այս հայտարարությունը եւ անհրաժեշտ քայլեր ձեռնարկել Թուրքիայում տիրող մարդու իրավունքների եւ ուրիշ ժողովուրդների նկատմամբ անհանդուրժողականության վերաբերյալ: Կոչ ենք անում նաեւ Եվրոպայի բոլոր պետություններին ստանձնելու համամարդկային իրենց պարտականությունը եւ դատապարտելու Ցեղասպանության ոճիրն ու ճանաչել Հայոց Ցեղասպանության իրողությունը:

Եվրոպայի Հայերի Համագումար
19 մարտի, 2010 թ. Ուլսալա, Շվեդիա

**ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ՇՆՈՐՀԱՎԱԼԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ**

ԵՀՀ-ն իր նշորհակալական ուղերձն է հղում շվեդիայի Ռիքսդագին, որը հակառակ թուրքական ճնշումներին ու այլ խոճնդոտներին՝ նկատի առավ պատմական փաստերի ճշմարտությունն ու արդարության վեր լինելը՝ ճանաչեց 1915 թ. հայերի եւ այլ քրիստոնյա ազգերի դեմ կատարված ցեղասպանությունը:

Հատուկ շնորհակալություն ենք հղում Ռիքսդագի Սոցիալ-Դեմոկրատական, Չախ եւ Կանաչների Կուսակցություններին, որոնք հետամուտ լինելով իրենց խոստումների կատարմանը՝ ճանաչեցին հայոց ցեղասպանությունը եւ դատապարտեցին այն:

Մեր խորհին շնորհակալությունն ենք հայտնում նաեւ կոալիցիայի բոլոր այն պատգամավորներին, ովքեր ցուցաբերելով խիզախություն՝ քվեարկեցին ըստ իրենց համոզման, այլ ոչ թե ըստ կուսակցության դիրքորոշման:

Շնորհակալություն ենք հայտնում նաեւ բոլոր այն կազմակերպություններին եւ անհատներին, ովքեր երկար տարիներ ջանք ու եռանդ չեն խնայել, որպիսով Շվեդիայում պաշտոնապէս ընդունվի հայոց ցեղասպանությունը:

Եվրոպայի Հայերի Համագումար
11 մարտի 2010 թ. Ուլսալա, Շվեդիա

Միջազգային

«ԴՊԷ ՍՈՒՄ ԵՔ»

Թուրքական հեռուստաընկերության եթերում տեղի է ունեցել բանավեճ «Թարաֆ» թերթի ստամբուլահայ թղթակից Սեւան Նշանյանի եւ թուրք պատմաբան Յուսուֆ Չալաչօղլուի միջեւ: Նշանյանը նշել է, որ Թուրքիան շարունակում է անամոթաբար ժխտել ցեղասպանության փաստը: «Եթե Անկարան ընդունի իրողությունը, ապա ոչ մի խնդիր չի ունենա», ասել է Նշանյանը: Չալաչօղլուն հակադարձել է՝ «բացահայտելով ճշմարտությունն» այն մասին, որ «Թուրքիայում զոհված 250-300 հազար հայերի մահվան պատճառը եղել են սովը եւ տարբեր հիվանդությունները»: «Դուք ստում եք,- արծագանքել է Նշանյանը,- Դուք անամոթաբար խաբում եք, պարոն»: Նշանյանը նաեւ ուղիղ եթերում ներկայացրել է ցեղասպանությունը ապացուցող որոշ փաստաթղթեր, այդ թվում՝ Թալեաթ փաշայի հրամանը: Չաղորդավարը, նկատելով մեծացող լարվածությունը, հաղորդումն ընդմիջել է գովազդով:

ՊԵՆՏԱԳՈՆԸ ՎԱՅԵՐԵՆԸ ԴԱՍԵԼ Է «ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐԻ» ՉԱՐՔՈՒՄ

ԱՄՆ պաշտպանության նախարարությունը (Պենտագոն) աշխարհի ավելի քան 100 լեզուներ՝ Լեզվական պատրաստվածության ծրագրի շրջանակներում, բաժանել է երեք խմբերի՝ «ծայրահեղ անհրաժեշտության լեզուներ», «քաղաքական ճգնաժամերի եւ հավանական վտանգների դեպքում անհրաժեշտ լեզուներ» եւ «այլ լեզուներ»: Առաջին խմբում մտել են ռուսերենը, արաբերենը, կորեերենը, չինարենը, ֆրանսերենը, պորտուգալերենը, թուրքերենը, պարսկերենը, թուրքմեներենը, փուլճաներենն ու դարին: «Հավանական վտանգների եւ քաղաքական ճգնաժամերի դեպքում» անհրաժեշտ լեզուների շարքում Պենտագոնը դասել է վրացերենը, ադրբեջաներենը, ղազախերենը, ուզբեկերենը, չեխերենը, վիետնամերենը, մի շարք աֆրիկյան լեզուներ: Իսկ «այլ լեզուների» շարքում հայտնվել են հայերենը, ուկրաիներենը, ինչպես նաեւ մնացած հետխորհրդային երկրների լեզուները:

ՎԱՅՎՐԵԱԿԱՆ ՕՆ-ԼԱՅՆ ԿՈՒԼԻՑԻԱ ԸՆԴԴԵՄ ԺՄՏՈՂՆԵՐԻ

2007 թվին, երբ Մասաչուսեթսի բնակիչներն իմացան, որ «Հակազրպարտչական լիգան» (ՀԶԼ) ժխտում էր հայերի ցեղասպանության փաստը եւ թուրքական կառավարության օգտին քարոզչությամբ էր զբաղվում խոչընդոտելու մարդկության դեմ գործադրված այս

ոճրագործության կոնգրեսական ճանաչումը, տասնչորս համայնքներ, Ուոթերթաունի առաջնորդությամբ, դուրս եկան ՀԶԼ-ի «Ատելության համար տեղ չկա» ծրագրից՝ որպես բողոքի նշան: Իրենց համապատասխան կազմակերպություններում ընդգրկված բազմաթիվ հրեաներ ցնցված էին այն փաստից, որ ՀԶԼ-ն եւ մի քանի այլ կազմակերպություններ ժխտում էին մեկ ուրիշ ազգի դեմ գործադրված ցեղասպանությունը: Այդ ժամանակ էլ Լեքսինգտոնի «Թեմփլ Այգայա» եւ Բոստոնի «Թեմփլ Իսրայել» խմբակցության անդամները որոշեցին բոստոնաբնակ հայերի հետ համագործակցելով ստեղծել «Հայերի ցեղասպանությունը ճանաչելու կոալիցիան», որը խուսափելու էր «երկակի ստանդարտներից» եւ Հայոց եղեռնի փաստը չէր պայմանավորելու քաղաքականությամբ:

Այժմ, մարտի 4-ի առնչությամբ կոալիցիան, ըստ մամուլի հաղորդագրության, որը համատեղ հրապարակել են Լեքսինգտոնի հայազգի բնակիչ Լաուրա Պոլոսյանն ու «Թեմփլ Այգայայի (Իսահակի)» ռաբբի Հովարդ Յաֆֆեն (կոալիցիայի համահիմնախնդիրները), «ՕԳ-լայն խնդրագիր» են նախաձեռնել, որը հետամուտ է լինելու ցեղասպանության ճանաչման գործընթացին: «Որպես քաղաքացիներ մենք պետք է երաշխավորենք, որ համամարդկային իրավունքներն ու պատմական ճշմարտությունները դառնան հիմքը Ամերիկայի արտաքին քաղաքականության: Մեր գործելակերպով են մարդիկ բնութագրելու մեզ: Եթե ուրիշներից պահանջում ենք, որ հարգեն մարդու իրավունքները, մենք եւս պարտավոր են դա անել եւ այդ հարցում պետք է հետեւնողական լինենք», ասված է հաղորդագրության մեջ, որը կոչ է անում ակտիվորեն այցելել [«http://www.change.org/action/view/tell congress to recognize the armenian genocide»](http://www.change.org/action/view/tell_congress_to_recognize_the_armenian_genocide) կայքը:

Նասարակական

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԵԻՑ ԲՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԱՆՎԵՐՋ ԱՐՏԱՆՈՍՔԸ

Միայն ե՞ս էի, որ առանց դույզն չափով իսկ զարմանալու արծագանքեցի այն լրատվությանը, թե աֆղանացի մահմեդական զինվորները կռվում են մահմեդական թալիբների դեմ իրենց հրացանների նշանոցի վրա ունենալով կողավորված մակագրություն Նոր կտակարանի «Ավետարան ըստ Հովհաննու» գրքից:

Բրիտանացի նկարիչ Հոլման Հանտը (1827-1910) կարո՞ղ էր երեւակայել, որ իր «Աշխարհի լույսը» (նույն ինքը Հիսուս Բրիստոսը) կտավը (1854 թ.) առաջնորդելու էր ամերիկացիների եւ աֆղանների հրազենների գնդակները դեպի մահմեդական թալիբների սրտերը: Միզուցե:

Ուրեմն կարելի՞ է ենթադրել, որ մի խումբ կրոնական մոլագարներ՝ ԱՄՆ-ում «Տրայջիկոն» տեսակի հրազեններ պատրաստողները հավատացած են, որ այդ մակագրությունները «մաս են կազմում մեր երկրին ծառայելու հավատին»:

Այն ժամանակից ի վեր, երբ սերբերն ու լիբանանցի ֆալանգիստները սկսեցին անցյալ երեք տասնամյակների ընթացքում կոտորել եւ բռնաբարել իրենց մահմեդական թշնամիներին՝ Մարիամ Աստվածածնի նկարը ունենալով իրենց հրացանների կոթերին, նման անհեթեթ բան չէր եղել: Այո՛, ես էի, որ առաջինը նկատեցի 2003 թվին կենտրոնական Բաղդադում կանգնած «M1A1 Աբրամս» տիպի ամերիկյան երկու տանկեր, որոնցից մեկի վրա դրոշմված էր «Խաչակիր 1», իսկ մյուսի վրա՝ «Խաչակիր 2» բառերը: Մի ասեք, որ Պենտագոնում (կամ պաշտպանության նախարարությունում), որտեղ հավանաբար 400 «Տրայջիկոնների» մի նոր խմբաքանակի պատվեր արդեն ունեն, ոչ ոք չի հետաքրքրվել դրանց վրա գրված տարօրինակ «JN8:12» մակագրությամբ:

Չարմանալի չէ, ուրեմն (եւ դա է ցավալին), որ քրիստոնյաները մշտապես հեռանում են Մերձավոր Արևելքից: Եգիպտոսում 6 դպտի քրիստոնյաներ (եւ մեկ մահմեդական ոստիկան) սպանվեցին ՕՃՆճյան տոներից, երբ տեղացի մահմեդականները հարձակվեցին նրանց վրա: Ղպտիներն իրենց երկրի 80 միլիոն բնակչության մոտ 10 տոկոսն են կազմում գուցե, բայց նրանք խմբերով Ամերիկա են ուղեւորվում: Ինչո՞ւ: Խնդիրներից մեկը Եգիպտոսում եկեղեցի կառուցելու պաշտոնական թույլտվություն ստանալն է: Եթե նույնիսկ նրանք կարողանում են ձեռք բերել այդ թույլտվությունը, ապա եկեղեցու անմիջական հարեւանությամբ շուտով վեր է խոյանում մի նոր մզկիթ:

Շնորհիվ այդ աստվածավախ Ջորջ Բուշ կրտսերին՝ հետպատերազմական Իրաքում քրիստոնյաները՝ փախչելով աղանդավորական բռնություններից, այսօր էլ շարունակում են քոչել դեպի արեւմուտք: Որովհետեւ նրանց սպանում են, այրում նրանց տները: Նույնիսկ Իրաքի իսլամական գերագույն խորհրդի առաջնորդ Ամմար էլ-Ֆաքիմն է օրերս Բեյրութում հայտնվել Լիբանանի մարոնիթ-կաթոլիկների պատրիարքին ասելու, որ ինքն «ամեն ինչ» անում է Իրաքի իր քրիստոնյա եղբայրների եւ քույրերի համար: Ավժիրում իսլամիստ մոլեռանդներն այրել են Տիգրի Ուզուն բնակավայրի շենքերից մեկում տեղավորված բողոքականների եկեղեցի-հավաքատեղին:

Իմաստ չունի այստեղ խորանալ ու հանգստյան վերջին վայրը փնտրել այն մեկուկես միլիոն հայ քրիստոնյաների, որոնց թուրքերը կոտորեցին զանգվածաբար 1915-ին, չնայած ոչ Բուշը, ոչ էլ իր հաջորդը ցեղասպանություն չեն կոչում կատարվածը՝ վախենալով մահմեդական թուրքիայից:

Եթե ես կարդացածս ճիշտ եմ հասկացել, անցյալ շաբաթ լիբանանյան պարբերականներից «ԱՆՆահար» թերթում Ջիհադ Չեյն անունով լրագրողը գրում էր, որ մահմեդական աշխարհում կառավարությունները ճնշում են հասարակություններին, որոնք էլ իրենց հերթին ճնշում են փոքրամասնություններին: Չեյնի կարծիքով՝ Մերձավոր Արևելքում երկրի ղեկավարները հրաժարվել են մեր օրերում միջմշակութային արժեքների պահպանողը լինելու գաղափարից եւ դարձել իրենց քաղաքական համայնքների անվտանգությունն ապահովող անձնավորություններ:

Իմ առաջ քաշած թեզն այն է, որ փոքրամասնություններին այլեւս հաշվի առնող չկա: Բայց դա չպետք է որպես կանոն ընդունել:

Իսրայելի բանակը չէ՞ր, որ 1996-ին Լիբանանի ռմբակոծությունն անվանել էր «ցասման ողկույզներ», մի գործողություն, որն ընդգրկում էր Ղանայի վրա դաժան հարձակումը, որին զոհ գնացին 106 լիբանանցի խաղաղ քաղաքացիներ: Իսկ «ցասման ողկույզներ» անվանումը վերցված էր Աստվածաշնչի երկրորդ Օրինաց գրքից (գլուխ ԼԲ, տուն 25), որտեղ ասվում է «Դուրսեն սուրը ու ներսեն վախը երիտասարդները ու կույս աղջիկները, կաթնակեր տղաքները ու ալիեր ծերերը պիտի ջարդեն» (Գիրք հին ու նոր կտակարանաց: Բեյրութ, Լիբանան, 1945 թ.-Հ. Օ.) Ընդհանուր առմամբ շատ դիպուկ նկարագրություն այն ամենի, ինչ կատարվել էր Ղանայում: Չմոռանանք նաեւ այն աֆղանցի գյուղացիներին, որոնք զոհ գնացին ՆԱՏՕ-ի «հերոսական» օդային ռմբակոծություններին: Բնավ չեմ զարմանա, երբ լսեմ, որ ՆԱՏՕ-ի ռումբերի վրա նույնպես եղել են DY32:25 մակագրությունները, այսինքն՝ երկրորդ Օրինաց գրքի վերոնշյալ հատվածը:

*ՈՐՐԵՐՏ ՖԻՍԷ, Գողվածը անգլիական, «Ինդիփենդենտ»
թերթում լույս է տեսել հունվարի 25-ին*

Եղեռնապատում

**«ԹԱՅՄՍ» ԹԵՐԹԻ ԹՂԹԱԿԻՑ ՆՈՐՄԱՆԻ
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Էրզրում
24 օգոստոսի 1Տ77 թ.

Հայերի դրությունը այն երկրում, որտեղով անցել է Իսմայիլ փաշայի բանակը, ծայր աստիճան ողբալի է՝ Ալաշկերտի դաշտի բոլոր 122 գյուղերը, իննից բացի, ավերված են: Այն մի քանի քրիստոնյաները, ովքեր ՏերՂուկասովի նահանջի ժամանակ չեն օգտվել Ռուսաստանի հովանավորությունից, բարբարոսաբար սպանվել են, մի ամբողջ շարք գյուղեր այրված են մինչև վերջ: Մուշի գավառում մի քանի գյուղեր ավերվել են, իսկ բնակիչներից շատերը մորթվել: Նույն բախտին են արժանացել Բայազետ քաղաքը և շրջակայքի գյուղերը: Այդ վայրերի մեծ մասում տղամարդիկ, կանայք և երեխաները սպանվել են ամենադաժան ձևով...

Պատմական

ՌԻՇԱԳՐԱՎ ՎԱՎԵՐԱԳԻՐ

Վիեննայի տարբեր արխիվներից ժողոված վավերագրերի Արտեմ Օհանզանյանի կազմած բազմահատոր հավաքածուի 9-րդ հատորում հանդիպեցինք ողագրավ, արդիական հնէոլո՝ բյան մի վավերագրի (էջ 6331-6332), որը թարգմանությամբ ներկայացնում ենք ընթերցողներին:

Հավանաբար, սույն վավերագիրը ստեղծվել է Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարարությունում Իրանի դեսպանտրոյի արած համապատասխան հայտարարության, հիման վրա:

Այն վկայում է, որ Իրանի կառավարությունը բողոքում է «Ադրբեջանի հանրապետություն» անվանման դեմ, քանզի այդ անվանումը հանիրավի Փոխանված է Իրանին պատկանող վաղեմի Ադրբեջան (Ատրպատական) նահանգի անվանումից:

Նման անվանակոչության համար չունենալով պ սի հիմք, թուրքաթարական, ցեղերի հետևորդները բնիկ ժողովուրդներին, բնազնվելով կամ փտարելով՝ սեֆականացնում էին, ու միայն, նրանց տարածքները, այլև յուրացնում պատմական անվանումները, տվյալ դեպքում՝ Ադրբեջան տեղանունը, որի դիմում լինելը նշել է նաև պատմաբանՆարեկեղազեմ Վ. Բարտոլոմյոս:

Հետագա տասնամյակներում պատմական Ատրպատականի (Ադրբեջանի) նկատմամբ Բաքվի դրսևեո- բած հավակնությունները գալիս են հաստատելու, որ Իրանի այն ժամանակվա կառավարության մտահոգությունն ամենեին անհիմն (էջ:

Վահրամ Մարտիրոսյան

Թիվ 3320
Վիեննա, 12 հուլիս, 19182.

Պարսկաստանի դեսպանտրոյն այցելել է այստեղ եւ հայտնել, թե իր կառավարությունը տեղեկացել է, որ Թուրքիան վերջերս Բաթումում Կովկասի նորաստեղծ երեք թե չորս հանրապետության հետ հաշտության պայմանագիր է կնքել:

Հաշտության սույն պայմանագրի տարածքային պայմանների առնչությամբ պարսից կառավարությունն իրեն իրավունք է վերապահում կարծիք հայտնել այնքանով, որքանով խոսքը վերաբերում է պարսկական բնիկ մի տարածքի. Ուստի եւ հենց այժմ բողոքում է այն իրողության դեմ, երբ նորաստեղծ պետական այդ կազմավորումներից մեկն իրեն ,Ադրբեջանի Հանրապետությունն է անվանել:

«Ադրբեջան» անվանումը վերաբերում է պարսկական մի նահանգի, որը ներկայիս պարսից գահաժառանգի հանդեպ առանձնահատուկ պարտավորություններ ունի:

Անթույլատրելի է, որ անմիջական հարեանությամբ նորաստեղծ պետական մի կազմավորում ի րեն այն նույն անվանումով է կոչում, որը կրում է պարսկական հիշյալ նահանգը: Պարսից կառավարությունը հույս է հայտնում, որ դուք վերը շարադրված տեսակետը կհայտնեք նաև կայսերական (իմա Ավստրո-Հունգարիայի - Վ.Մ.) կառավարության անունից:

Մշակույթ

Սեկանյա աշխատանքային զեկույց՝ Իրանահայ Գրողների Միության

Երբ 2008 թ. աշնանը երկու իրարայացող դնհ. ժողովների արդյունքում փակ եւ պաշտոնական քվեարկությամբ ընտրվեց ու գործի անցավ Իրանահայ գրողների միության նոր վարչությունը, որպես սկզբունքային ընդհանուր նպատակ իր առջեւ դրեց միության առաջիկա շրջանի աշխատանքային ուղեգծի հարցը եւ որոշեց, որ վարչությունը առավելապես ուշադրություն դարձնի միության ոչ-քանակային աճին, այլ՝ որակական բարձրացմանը, նաեւ նոր՝ երիտասարդ ուժերի ստեղծագործական նկրտումներին, ու մղիչ ուժ հանդիս՝նա առավելապես նրանց քաջալերելու ուղղությամբ: Այդ իսկ պատճառով՝ 2008 թ. դեկտեմբեր ամսվա հանդիպումը նվիրված էր երիտասարդ ու խոստումնալից գրողներ՝ Էլայիսա-Լեռնիկ Իսայանցի բանաստեղծությունների եւ Մեղմիկ Մանսուրյանի արձակ էջերի հեղինակային լուսններին ու քննարկմանը: Նույնպես հունվար ամսվա հանդիպումը նվիրված էր երիտասարդ բանաստեղծուհիներ՝ Ալինա Յովսեփյանի (Ալմա), Ադանա Չարմահալյանի եւ Անգինե Վարդանյանի ստեղծագործությունների վերլուծմանն ու քննարկմանը: Իգմ-ի փետրվար ամսվա հանդիպումը, Վարդանանց տոնի առիթով, նվիրված էր Եղիշե պատմագրի վասն Վարդանանց եւ հայոց պատերազմի գրքին, որի մասին բանախոսեց Թեհրանի Ազատ համալսարանի Յայերենագիտական ամբիոնի վարիչ դոկտ. Անդրանիկ Սիմոնյանը՝ ընկերակցությամբ նույն ամբիոնից՝ Նայիրի Ղազարյանի, Զլարա Աբուլյանի, Աննա Չարգարյանի, Ռիմա Սո՝«նյանի եւ Լինետ Աբուլյանի: Յանդիպմանը գրողներից բացի՝ ներկա էին նաեւ ուսանող-ուհիներ: Նիստը վարում էր Իգմ-ի նախագահ Վարանդը: Մարտ ամսվա սկզբում կազմակերպվեց հանդիպում՝ Յայաստանի Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանի եւ Երեւանի Պետ. համալսարանի բանասիրական գիտությունների դոկտ. պրոֆ. Սուրեն Դանիելյանի հետ, որոնք այդ օրերում Թեհրանում էին գտնվում՝ Վիլիամ Սարոյանի 100-ամյակի առիթով: Յանդիպումն անցավ արտահայտությունների ու մտքերի փոխանակման ուղղությամբ՝ ջերմ ու հարազատ մթնոլորտում: ապրիլ ամսվա հանդիպումը թվականային պատշաճության կարգով, հատկացված էր ,հայոց Ցեղասպանությունը՝ արաբ պատմիչների երկերում գրքի քննարկմանը, որը պարսկերենի է թարգմանվել եւ լույս տեսել Գարուն Սարգսյանի միջոցով: Թարգմանչի բացատրություններից եւ արտահայտություններից հետո հատորը ներկայացրեց միության անդամ բանաստեղծ Գուրգեն Քեշիշ-յարությունյանը եւ զրույց ծավալվեց այդ թեմայի շուրջ: այդ օրը հյուրաբար հանդիպմանը ներկա էր նաեւ Երեւանից ժամանած Յայաստանում Սերբիայի պատվո դեսպան, բանաստեղծ Բաբգեն Սիմոնյանը, որն ունեցավ իր արտահայտություն-ելույթն ու ընթերցեց իր ազգային բանաստեղծություններից մեկը: այդ օրերում ,հանդես գրականության եւ արվեստի պարբերականի եւ Իրանահայ գրողների միության վարչության նախաձեռնությամբ ու հրավերով Փարիզից Իրան էին ժամանել բանասեր, բանաստեղծ, դասախոս եւ անվանի մտավորակ՝ Գրիգոր Պըլսյանն ու իր տիկինը՝ ճրտ. Արփի Թոթյանը: 2009 թվականը համընկնում էր

մեր գրականության երկու մեծ տիտանների՝ Յուլիանոսի Թուրանյանի եւ Լեւոն Շանթի ծննդյան 140-ամյակին: Վարչությունն նկատի ուներ նշել հորեյվանական այդ առիթները, որով ՀՀԸՄ-ի եւ ԻԳՄ-ի միացյալ նախաձեռնությամբ՝ հունիս 3-նուն ՀՀԸՄ-ի «Ննիկու Աղբալյան» սրահում կայացավ Թուրանյանին նվիրված հասարակական հանդիսություն, որտեղ որպես օրվա գլխավոր բանախոս՝ ելույթ ունեցավ Գրողների միության վարչության նախագահ բանաստեղծ Վարանդ: ամառային արձակուրդից հետո, միությունս իր ընդհանուր հանդիպումները վերսկսեց Մշակույթի օրվան նվիրված ձեռնարկով, որը տեղի ունեցավ «Վաչե Յուլիանյան» համալիրի միությանս կենտրոնատեղիի դահլիճում: «Մաշտոցյան գրերի գյուտի առանձնահատկությունները» թեմայով ելույթ ունեցան միությանս անդամներ՝ դոկտ. Ա. Սիմոնյանն ու Քլարա Աբուլյանը: Մույն օրը ելույթ ունեցավ նաեւ հյուրաբար թեմանում գտնվող բեռլինաբնակ լրագրող ու պատմության հետազոտող Համո Պետրոսյանը, որն իր հետաքրքիր արտահայտությունների մեջ անդրադարձավ Հայ Դատին առնչվող հարցերին եւ արեւմտյան Եւրոպայի հայ համայնքների կյանքին ու³ նցուդարձերին: Նոյեմբեր ամսվա հանդիպումը հատկացված էր Լեւոն Շանթի 140-ամյակին, որի առիթով էլ վերլուծական ելույթ ունեցավ ,հանդես-ի գլխավոր խմբագիր-թատերագետ Վարուժ Սուրենյանը՝ առանձնապես անդրադառնալով Լեւոն Շանթի թատերական երկերի յուրայատկություններին: «Կտեմբեր ամսում միությունս ունեցել է երեք միջոցառում-ձեռնարկ: Առաջինը հատկացված էր միությանս անդամ Յուլիկ Սիմասյանի ուսումնասիրական-հետազոտական աշխատանքներին: Դեկտեմբերի 25-ին ելույթ ունեցավ բանաստեղծ Նորվանը՝ նյութ ունենալով «Վահան Տերյանի պոեզիայի լեզունը» թեման, որով ներկայացրեց Տերյանի քերթողության մասին հետաքրքրական ու համապարփակ մանրամասներ

Մարզական

Իրանահայերի մասնակցությունը օլիմպիական խաղերին

Միքայել Իսպիրյան, Պրոֆեսոր

Հին աշխարհի պետությունների շարքում Պարսկաստանը ուրույն տեղ էր գրավում մարզական խաղերի, ֆիզիկական տարբեր վարժաձեւերի մրցումների կազմակերպման, ֆիզիկական դաստիարակության հստակ համակարգի մշակման Ա գործադրման առումով:

Այդ մասին, մշակույթի հուշարձանների վկայություններից, ինչպես նաև բազմաթիվ այլ աղբյուրներից բացի, տեղեկություններ են հարորդել նաև հին հույն պատմիչներ Հերոտոս-տոսը և Քսենոփոնը:

Հենվելով վերջիններիս հիշատակած փաստերի վրա՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հանրահայտ պատմաբան, հունգարացի Լ.Կանը գրում է, որ Պարսկաստանում գործում էին «դաստիարակչական տներ», որտեղ ֆիզիկական դաստիարակություն էին ստանում 7-16 տարեկան երեխաները: Այստեղ նրանք պարապում էին ըմբշամարտով, վազքով, ձիավարությամբ, նիզակներությամբ, նետաձգությամբ:

Այլեի ուշ, այդ հաստատությունների հիման վրա ստեղծվեցին, այսպես կոչված, ուժի զարգացման տները (*զաբխա- Օե*), որոնք ընդհուպ մինչև ժամանակակից դպրոցական ֆիզիկական դաստիարակության համակարգին անցնելը պահպանել էին իրենց նշանակությանն ու դերը որպես Պարսկաստանի ֆիզիկական կուլտուրայի կենտրոններ:

Այս ամենից զատ, երկրում մեծ տարածում ունեին որսորդությունը, ձիագնդակախաղը, որը կոչվում էր *չաուրան*, շախմատը և այլն:

Հին Պարսկաստանում ֆիզիկական վարժություններով և տարբեր մարզաձեւերով զբաղվում և սիստեմատիկաբար մարզվում էին ոչ միայն երեխաները, երիտասարդները և զինվորները, այլև բոլոր զորավարները և, նույնիսկ, թագավորները: Պատահական չէ, որ Պարսկաստանի թագավոր Դարեհ 1- ի դամբարանի վրա գրված են հետևյալ խոսքերը. «Իմ ձեռքերը և ոտքերը մարզված են: Որպես հեծյալ ես լավ հեծյալ եմ: Որպես նետաձիգ ես լավ նետաձիգ եմ և նետահարում եմ և՛ հետիոտն, և՛ հեծյալ»:

Պարսկաստանը (1935 թվականից՝ Իրանը) մ.թ.ա Ը/-111 հազարամյակում արդեն իսկ համարվում էր համաշխարհային քաղաքակրթության հնագույն կենտրոններից իր զարգացած մշակույթով և ֆիզիկական դաստիարակության համակարգով:³

Հայտնի է, որ սկսած մ.թ.ա VI դարից Իրանում բնակվում և երկրի առօրյա կյանքին, այդ թվում և մարզական ու մշակութային միջոցառումներին մասնակցում էին նաև հայերը:⁴

385 թ. կայացած հին հունական 291-րդ օլիմպիական խաղերի բռնցքամարտիկների մրցումների հաղթող, հայոց թագավոր Վարազդատ Արշակունին, մինչև (յիմպիական այդ խաղերը մարզվել էր Պարսկաստանում, ուր գտնվում էր որպես պատանդ: «Շապուհից փախչելով նա գնացել էր իր կայսր դուռը և այնտեղ քաջ հանդիսացել»:⁵

Միջնադարյան Պարսկաստանում անցկացված խաղերին և մրցումներին գործուն անչոյություն են ունեցել նաև հայերը: Գ.Բուտանը և Յ.Միմոնյանը գրում են, որ «Հայերը մասնակցել են պարսից Շապուհ և Հազկերտ արքաների կազմակերպած ձիամրցումներին, զինամրցումներին և հաճախ դուրս եկել հաղթանակով»:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ժամանակակից օլիմպիական խաղերին, որոնք վերականգնվեցին 1894 թ. Սորբոնում կայացած Միջազգային մարզական կոնգրեսի որոշմամբ, մասնակցել են 24 տարբեր պետություններից 58 հայ մարզիկներ և մարզուհիներ: ■

1896 թ. առաջին օլիմպիական խաղերից (Աթենք) մինչև 1996 թ. Ատլանտայում (ԱՄՆ) կայացած 27-րդ խաղերը Հայաստանից մասնակցել են 71, նախկին Խորհրդային Միության հանրապետություններից 22 և սփյուռքահայությունից, ինչպես ասվեց՝ 58 արջտեղեր: Ուշագրավ է, որ ժամանակակից օլիմպիական խաղերի նշված 58 մասնակիցներց 12-ը իրանահայեր են և օլիմպիական խաղերի են ներկայացել Իրանի հավաքական թիմերի կազմում: Համեմատության համար ասենք, որ ժամանակակից օլիմպիական խաղերին Ֆրանսիայից ընդգրկված են եղել 8, Հունաստանից 5, ԱՄՆ-ից և Բուլղարիայից 4-ական, Ռուսաստանից 3, Բրազիլիայից, Գերմանիայից, Լիբանանից՝ 2-ական մարզիկ: Բազմամարդ սվյուռ- քահայ գաղթօջախներ ունեցող պետություններից (Ավստրալիա, Կանադա, Կիպրոս և այլն) օլիմպիական խաղերի մասնակցել են մեկական մարզիկ կամ ընդհանրապես չեն մասնակցել: Թուրքահայությունից օլիմպիական խաղերի մասնակցել են միայն երկու պոլսահայ մարզիկ (Մկրտիչ Մկրտում, Վահան Փավազյան)՝ 1912 թ.: 1912 թ. Հելսինկիի 5-րդ օլիմպիական խաղերից հետո, մինչև 1948 թ. հայազգի մարզիկներ չեն մասնակցել: Հայաստանի Հանրապետությունը այդ տարիներին գտնվում էր ԽՍՀՄ կազմում և

հայաստանցի մարզիկները նույնպես օլիմպիական խաղերում չէին կարող ընդգրկված լինել քանի որ ԽՍՀՄ-ը չէր անդամակցում Միջազգային օլիմպիական կոմիտեին:

1948 թ. հուլիսի 29-ից մինչև օգոստոսի 14ը Լոնդոնում կայացած 14-րդ օլիմպիական խաղերին մասնակցեցին միայն երեք հայազգի մարզիկ իրանահայ բռնցքամարտիկներ Մանվել Աղասին (Աղասյանը) և Աղանուր Հարությունյանը, ինչպես նաև բրազիլահայ լողորդ Արամ Պողոսյանը: Լոնդոնի օլիմպիադայում Ա. Պողոսյանը ազատ ոճի լողի 4x200 մետր վախանցալողի մրցումներում գրավեց 8-րդ տեղը:⁷ Իրանահայ բռնցքամարտիկ Ա. Հարությունյանը մինչև կիսաեզրափակիչ մրցումներ չհասավ, պարտվեց և դուրս մնաց մրցումներից: Իրանահայ մյուս բռնցքամարտիկը Մանվել Աղասին չկարողացավ մրցանակային տեղ շահել, սակայն մասնակցեց ոչ միայն Լոնդոնի, այլև հաջորդ 15-րդ օլիմպիական խաղերին, որոնք կայացան 1952 թ. հուլիսի 19-ից մինչև օգոստոսի 3-ը Ֆինլանդիայի մայրաքաղաք Հելսինկիում: Այս խաղերում Մ. Աղասուն նույնպես չհաջողվեց օլիմպիական մրցանակ շահել:⁸ Ամենայն հավանականությամբ բռնցքամարտի ամերիկյան և եվրոպական դպրոցները գերազանցում էին սիսկան, իրանական դպրոցին:

Շար. 1

Խոհեր

Մեր անցած ճամբան

Թ. Ղարախանյան Միքակցի

25-30 տարիների զարգացումով, վերջին 5 տարվա ընթացքում այդ հազարավոր հայության թիվը այնքան պակասեց որ մինչեւ 1970-ին Մասչեդ Սուլեյմանում արդեն մնաց մեկ հայ անհատ Պրն. Աստվածատուր «Օստուր» կոշկակարը:

Եւ 70-ականների կեսերին պրն. Աստվածատուրի մահից հետոյ ոչ մի հայ չմնաց: Լսելով՝ համալիրը ծախվեց տեղացի ժողովրդին և Նաֆթի Ընկերության կառուցած շենքերը եւ գրագրների տները հանձնվեց զինվորության:

Չարմահալ գավառի Սիրաք գյուղը ուներ «Ջահանբին» անունով լեռնաշղթա, որի ամենաբարձր գագաթի անունն էր ՂԱԹ եւ որը դարեր առաջ հրաբուխային էր որովհետեւ հենց իր գագաթից մի խոռը հոր էր բացված գուցե հարյուրավոր մեթր խոռությամբ, որովհետեւ մի քար որ գագաթի գլխից գցում էիր հորը 15 վարկյանից հետոյ էր մի տեղի կայուն եւ դրմբոցի ծայրը լսվում: Յենց Պապական Յայաստանից պոկված, ԼՈՌԻ հմայիչ լեռնալանջերի սիրով ու հիշողությամբ այս լեռնային ստորոտներում մի անամուն աղբյուրի մօտ, աղբյուրի անունը դրեցին «ԼՈՌԻ աղբյուր» եւ փոքր բերդ սարքվեց «ՇԻՐԱԿ» անունով, որը պարսկաստանցին հնչում եւ գրվում էր «ՍԻՐԱՔ»: Եւ 17-երրորդ դարի կեսերին այդ շրջանի Մեծ Խան Մորթեգա Ղոլի Խան-ը որ հայտնի Ամիր Մոջահեդ Խանի հայրն էր, Ղարախանյաններ տոհմին նոր գյուղի տեղ առաջարկեց «Շահիթ Քորդ» գյուղաքաղաքի եւ «Յովչիգան» գյուղի պատմական «Դեհ բորդի» Չահիրի պուռկին եւ ամեն ձեւ մթերքի օգնություն տվեց որ մի մեծ գյուղ կառուցեն հենց «ՇԻՐԱԿ» անունով որն պարսկերենով հնչեց ՍԻՐԱՔ, տեղ տալով շրջակայքի հայ ընտանիքներին: Դե ադպես գոռգոռան հայության հլիլոց բարձրացավ եւ եկան ընտանիքներ շրջակայքի գյուղերից; Թաղանակ, Ահմադաբադ, Թիշնիզ, Շամսաբադ եւ մոտ ու հեռու գյուղերից, եւ լցրեցին 3 բերդանոց ՍԻՐԱՔ գյուղը, որի երեք բերդերն էլ կպած էին իրար կտուրներով, ու ամեն մի բերդ իր վճարովի

բերդապահի տնակ ուներ իր հսկայ դառվազանների գլխին, այդ երեք իրար կպած բերդերին մենք գյուղում անվանում էինք «Ցածի ՂԱԼԱ», «միջի ՂԱԼԱ» եւ «Վիրի ՂԱԼԱ»: Գյուղի նախամուտքի տարածքին էլ ասում էինք ՂԱԼԻ-ԴՈՒՌ, գյուղի հետեւի մասն էլ որ գետի պուռկն էր ասում էինք ՂԱԼԻ ԵՏԵՎ: Մեր գյուղում, 19-րդ դարում կառուցվեց Սուրբ Գեվորգ եկեցին, որի 4 քարե մուք մոխրագույն սյուները բերվել եւ նվիրվել էին հենց Սիրաքում ծնված Մեհրաբ Ղարախանյանի կողմից, որին Պարսկաստանի Նասեր-եղ-դին Շահ Թագավորը իրեն եավար Խան տիտղոսն էր տվել, պարսկերենով նշանակում էր «ժողովրդի հոգացող բարեկամ»:

Այդ թվականներին եւս սարքվեց ԽՐԻՍՅԱՆ ՅԱՅՐԻԿ՝ նոր դպրոց, և ունեցավ իր կրթական, դաստիարակչական, մարզական, թատերական, մշակութային և ազգային ազատագրական գաղափարական դերը: 1955-60 ական թվերին Գյուղացին քաշվեց քաղաքներ աշխատանք փնտռելու, գյուղի տուն ու տեղը ծախվեց և դպրոցն ու եկեղեցին դատարկ մնալուց փլվեց:

Մեր անդադար պայքարող ժողովրդի այս հոգեվառ ու լուսամիտ դիրքը կրկնվեց պարսկաստանի անհամար օտար գաւառներում, գյուղերում ու քաղաքներում, այժպես էլ նույն ազգային հոգեկան կրակը վառվեց Մասչեդ Սուլեյմանում, Աբադանում, Ահվազում, Աղա-Ջարիում, Օմիդիյեում և մեր ժողովուրդը նորից այս քաղաքներում կառուցեց դպրոց ու եկեղեցի եւ ամենից մեծ եղավ Մասչեդ Սուլեյմանի հսկա Միհրդադ դպրոցի համալիրը, բայց էլի քանի տարի անցավ և աշխատանքի պատճառով փոխադրվեց օտար տեղ և էլի ու էլի պարտավորվեց թողնել իր ձեռքով ու ջանքերով կառուցած հասարակական շինությունները և այս ամենից մնաց միայն մի երագի պես հիշողություն: Յասարկ ժողովուրդը միայն իր գլուխը պահեց:

2010 թվականի այս օրերին, Կարելի է ասել լրիվ պարսկաստանը Դարձել է մի մեծ Մասչեդ-Սուլեյման կամ Աբադան եւ մեր ազգի այսքան ծանոթ պատմությունը էլի ու էլի կրկնվում է...

